Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 263 - Ա
որոշման

«ՍԻԹԻ ՕՖ ՍՄԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂՑԿԵՂ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է անհատույց կերպով աջակցել քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձանց:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ քաղաք Երևան, Ներսիսյան 7, հեռախոս՝ 00 374 91 403 927, 00 374 10 283 800, e-mail: info@cityofsmile.org, ՀՎՀՀ՝ 00464744)
4.	Ծրագիրը կատարողը	«Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ քաղաք Երևան, Ներսիսյան 7, հեռախոս՝ 00 374 91 403 927, 00 374 10 283 800, e-mail: info@cityofsmile.org, ՀՎՀՀ՝ 00464744)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ներսիսյան 7, բնա–գավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	186,575,241 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող Հայաստանի Հանրապետությունում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձինք, ովքեր հանդիսանում են «Սիթի օֆ Սմայլ» բարեգործական հիմնադրամի շահառուներ, այդ թվում անապահով ընտանիքներ, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց բուժման ծախսերը:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) նախատեսվում է իրականացնել անհատույց դեղորայքային աջակցություն քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձանց՝ 177,975,241 դրամ. 2) կազմակերպական ծախսեր (հաշվապահական հաշվառման, ինկասացիոն, աուդիտորական ծառայություններ)՝ 8,600,000 դրամ. 3) բոլոր միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ապրիլի 17-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատ–վածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) դեղորայքի ձեռքբերում՝ 177,975,241 դրամ. 2) հաշվապահական հաշվառման ծառայությունների ձեռքբերում՝ 6,300,000 դրամ. 3) ինկասացիոն ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամ. 4) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,300,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1) հաշվապահական հաշվառման ծառայությունների ձեռքբերում՝ 6,300,000 դրամ. 2) ինկասացիոն ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամ. 3) աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,300,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Առողջապահության նախարարություն, Առողջապահության նախարարության «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոն» փակ բաժնե–տիրական ընկերություն:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) վերահսկողությունն իրականացվում է «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից. 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետի համաձայն սահմանված տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին. 3) «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով. 4) յուրաքանչյուր եռամսյակ «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի կայքում հրապարակվում է հիմնադրամի ծախսերի մանրամասն հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

28.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ